Սիրելի հայրենակից,

մեր սկզբունքը նույնն է, նպատակն արդիական:

Վստահե՛ք Դաշնակցությանը, դեկտեմբերի 9-ին քվեարկե՛ք Դաշնակցության օգտին, և մենք արդար, զարգացող, ուժեղ Հայաստան կունենանք:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հավատացած է, որ ազատ մարդ, անկախ և միասնական պետություն և համերաշխ հասարակություն ունենալու մեր բոլորի ցանկությունը միանգամայն իրագործելի է:

Մեր անկախ պետականությունը, ազատագրված Արցախը մեր արժանապատվությունն ու մեր հպարտությունն են: Մենք կարող ենք և պետք է զարգանանք առանց զիջելու: Սա պետք է դառնա համազգային պահանջ, գործողությունների հստակ ու վստահություն ներշնչող ծրագիր և նվիրված աշխատանք:

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՀՈԴԻՆ ՈՒ ՀԱՅԻՆ

3

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ ԵՆՔ

1. Զիջումները բացառող, զարգացող և անվտանգ Հայաստանին ու Արցախին:

2. Ազգային արժեհամակարգի ամրապնդմանը և համահայկական կառույցների արժևորմանը:

3. Սոցիալական արդարության հաստատմանը, աշխատատեղերի ստեղծմանը, չքավորության վերացմանը:

4. Պրոգրեսիվ հարկման սկզբունքին, շատից՝ շատ, քչից՝ քիչ:

5. Անվճար և որակյալ կրթությանն ու առողջապահությանը:

6. Հայ զինվորի, սպայի, բանակի նկատմամբ համազգային հոգածությանը, ազգ-բանակ դառնալուն, ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանը:

7. Հայաստանի կյանքում Սփյուռքի կազմակերպված ներկայությանը:

ԴԵՄ ԵՆՔ

1. Արցախի հարցում պարտվողական, զիջողական քաղաքականությանը:

2. Օտար և ազգավնաս օրակարգերին:

3. Պետության օտարմանը տնտեսությունից:

4. Հարուստին հարստացնող և աղքատին աղքատացնող քաղաքականությանը:

5. Անորակ կրթությանն ու ոչ մատչելի առողջապահությանը:

6. Պատերազմի ժամանակ մարտունակությունը խաթարող քարոզչությանը: Բանակը բեռ համարելուն, հայ սպայի և զինվորի դերն ու առաքելությունը նսեմացնելուն:

7. Սփյուռքը պառակտելուն և Սփյուռքի հետ ճևական հարաբերություններին: